

Աստուծոյ» ինչպէս կը կոչէ զայն Վատիկանեան Ժողովը, այս հայրենի տունը «որ կ'ընդունի բոլոր հաւատացեալները միացած մէկ հաւատքի եւ սիրոյ դոգմով»։ Դուք եկած էք Պետրոսին, որուն մէջ, համաձայն նոյն Ժողովի խօսքին՝ Եպիսկոպոսութիւնը եւ հաւատացեալները կը գտնեն «սկիզբը եւ տեսանելի հիմը Միութեան»։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱՊԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Մենք Սուրբ Ծնունդի ճրագալոյցի ճառով ծանուցինք Կարգինալներու Ս. Ժողովին՝ Մեր գիտաւորութիւնը ձեզ բարձրացնելու Ս. Ծիրանիի պատիւին, լաւ գիտակից էինք որ նման յայտնութիւն մը Եկեղեցւոյ գերազգային նկարագրին եւ իր ընդհանրական միութեան՝ մեծ հետաքրքրութիւն առաջ պիտի միութեան եւ զանազան կերպով կը պայքարի ձեռք ձգելու զայն։ Հաւատացեալները մեր խօսքերուն մէջ նոր շարժառիթ գտան միութեան եւ քաջալերի. ուրիշներուն — խօսքս պարկեշտ մարդոց մասին է, ո՛չ անոնց որ գերի են «ստութեան հօր»² — մեր խօսքերը լուրջ խորհրդածութեան նիւթ հայթայթեցին։ Եկեղեցին, ինչպէս այն ատեն բացատրեցինք, Աստուծոյ, Աստուծամարդուն, Քրիստոսի մէջ ունի անտեսանելի՝ բայց անխախտ սկզբունքը իր միութեան եւ իր ամբողջութեան, այսինքն իր Գլխուն եւ իր անդամներուն միութեան, իր սեփական կեանքի ամբողջական լրութեան մէջ, որ կ'ընդգրկէ ու կը սրբացնէ ամէն ինչ՝ որ ճշմարտապէս մարդկային է, եւ բազմադիմի ձկնորսները ու մասնական նպատակները կ'ուղղէ եւ կը կարգաւորէ դէպի ամբողջական եւ հասարակաց նպատակը, որ է Աստուծոյ հետ, կարելի եղածին չափ կատարեալ նմանութիւնը։ Եւ այս Եկեղեցին կը բարձրանայ այսօր, բերքաւոր եւ պառակտուած աշխարհի մը մէջ՝ իրեն ազդարար նշան մը որպէս նշան «կանգնեալ ի մէջ ազդաց», եւ իրեն կը հրաւիրէ զանոնք՝ որ տակաւին չեն հաւատար, եւ կը հաստատէ իր զաւակները իրենց զաւանած հաւատքին մէջ՝ — որովհետեւ առանց Աստուծոյ եւ Աստուծմէ հեռու մարդոց մէջ չի կրնար ըլլալ, ո՛չ մէկ ճշմարիտ, հաստատուն եւ ապահով միութիւն։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆ ՎՐԱՅ

Ուստի, եթէ այսօր շատեր ամէն կողմէն, մտահոգ ակնկալութեամբ եւ դողդոջուն յոյսով, Եկեղեցւոյ կը դառնան ու կը հարցնեն թէ ի՞նչ է իր մասը մարդկային ընկերութեան փրկութեան, վեհաստատութեան մէջ այն անգնահատելի բարիքին՝ բոլոր գանձերէն ամէնէն թանկագինին, որ է մնայուն

2. Նիսոյ Գ. վարդ. Սահմ. Ա. յաղագս Եկեղեցւոյ Քրիստոսի. Հաւաք. Լակ. հտր. Է, էջ 482.
3. Յովն. Բ. 44.
4. Ժողով. վաղ. Նիսոյ Գ. վարդ. Սահմ. յաղագս. Կաթող. հաւատոց. Հաւաք. Լակ. հտր. Է, էջ 251. — Ես. ԺԱ. 12.

խաղաղութիւն մը ներքին եւ արտաքին։ Եկեղեցւոյ պատասխանը կրնայ բազմապատիկ ըլլալ եւ զանազանեալ, ինչպէս զանազան են իր կարելիութիւնները։ Սակայն մեծ եւ վերջնական պատասխանը, որուն կրնան վերածուիլ բոլոր միաներն ալ, կը մնայ միշտ միութիւնը եւ ամբողջութիւնը Եկեղեցւոյ՝ հիմնուած Աստուծոյ եւ Քրիստոսի վրայ։ Ուսկից հարկաւորութիւնը, — նախ եւ առաջ Եկեղեցւոյ զաւակներուն, ինչպէս նաեւ մարդկային ընկերութեան համար ընդհանրապէս, — հարկաւորութիւն՝ յստակ եւ ճշգրիտ ծանօթութիւն մ'ունենալու այդ միութեան եւ ամբողջութեան գործնականապէս կիրարկուած ազդեցութեան։ Այս ազդեցութիւնը կը կիրարկուի մարդկային ընկերութեան հիմին, շինուածքին եւ ուժականութեան վրայ։ Այս երեք կէտերէն առաջինին զլխաւոր կարեւորութիւնը՝ Մեզ կը հրաւիրէ — շարունակելով Ծնունդի վերջիչեալ ճառը — նիւթ ընել զայն Մեր խօսքերուն դոր ձեզի կ'ուղղենք այսօր այս հանդիսաւոր եւ արտակարգ առիթով՝ որ Մեր շուրջը կը հաւաքէ Կարգինալներու Ս. Ժողովին նորընտիր անդամները արժանաւոր ներկայացուցիչներ Եկեղեցւոյ ընդհանրականութեան։

Ա. Ամբուքիւն եւ ապահովութիւն.

Եկեղեցին եւ արդի աշխարհակալութիւնը։

Եկեղեցւոյ միութիւնը եւ ամբողջութիւնը իր գերազգայնականութեան յայտնութեան լուսաւորուած՝ մեծ կարեւորութիւն ունի ընկերական կեանքի հիմին համար։ Ոչ որպէս թէ Եկեղեցւոյ պաշտօնն ըլլայ բովանդակել եւ կերպով մը ընդգրկել, իրեն աշխարհական հսկայ կայսրութիւն մը, բովանդակ մարդկային ընկերութիւնը։ Եկեղեցւոյ այս ըմբռնումը իրեն երկրաւոր կայսրութիւն չըջանին ճշմարիտ եղած է եւ համապատասխան իրականութեան, եթէ չուզուի զաւիարները եւ եղբարանութիւնները։

Եկեղեցին — կատարելով հանդերձ իր աստուածային Հիմնադրին պատուէրը տարածուելու բովանդակ աշխարհի մէջ եւ կոչելու Աւետարանի ամէն ուէրը — կայսրութիւն մը չէ, մասնաւորապէս աշխարհակալական իմաստաւորած՝ — կայսրութիւն մը չէ, մասնաւորապէս աշխարհակալական իմաստով որ այսօր կը տրուի այս բառին։ Ան իր յառաջխաղացումի եւ տարածումի որպէս աշխարհակալութեան ճամբէն տարբեր ուղի կ'ընթանայ։ Ան ման մէջ՝ արդի աշխարհակալութեան ճամբէն տարբեր ուղի կ'ընթանայ։ Ան եւ առաջ կը յառաջէ դէպի խորութիւն, յետոյ կը տարածուի եւ կ'ընդարձակուի։ Ան՝ կը փնտռէ նախ մարդը ինքնին, կը ջանայ կերպաւորել դարձակուի։ Ան՝ կը փնտռէ նախ մարդը ինքնին, կը ջանայ կերպաւորել դարձակուի։ Անոր աշխատութիւնը կը կատարուի իւրաքանչիւր մարդու սրտին թիւնը։ Անոր աշխատութիւնը կը մնայ կեանքի բոլոր տեսողութեան, իւր խորը, բայց իր անդրադարձումը կը մնայ կեանքի բոլոր տեսողութեան, իւր խորը, բայց իր անդրադարձումը կը մնայ կեանքի բոլոր մարդկային ընկերութեան խարխիւ մարդերով, Եկեղեցին կը պատրաստէ մարդկային ընկերութեան խարխիւ մը, որուն վրայ կրնայ հանգչել ապահով կերպով։

Արդի աշխարհակալութիւնը, ընդհակառակն, ներհակ ճամբայ մը կ'ընթանայ, կը յառաջէ տարածութեամբ եւ ընդարձակութեամբ: Զի փնտռեց մարդը իրերէ մարդ, այլ իրերը եւ ուժերը՝ որոնց կը ծառայեցնէ մարդը, հետեւաբար իր մէջ ունի սերմեր՝ որ վտանդի կ'ենթարկեն մարդկային կենակցութեան հիմը: Այսպիսի պայմաններու մէջ կրնա՞յ արդեօք զարմանք պատճառել ներկայ մտատանջութիւնը ժողովուրդներու, իրենց փոխադարձ ապահովութեան: Մտատանջութիւն՝ որ առաջ կու գայ տարածուելու անկարգ ձկտումէն, որ իր մէջն ունի մշտական անհանդստութեան կրծող որդը, եւ այնպէս կ'ընէ որ ապահովութեան հարկի մը՝ յաջորդէ ուրիշ մը առանց ընդհատումի, դուցէ աւելի ստիպողական:

Բ. Յարակցութիւն եւ հաւասարակշռութիւն .

Նկեղեցւոյ ազդեցութիւնը մարդու ներքինին վրայ :

Բայց անօրուտ պիտի ըլլար հիմին ամբողջինը, եթէ չէնքը չունենար յարակցութիւն եւ հաւասարակշռութիւն: Արդ եկեղեցին կը նպաստէ նաեւ յարակցութեան եւ հաւասարակշռութեան ընկերական չէնքին բոլոր բազմա-տեսակ եւ բարդ տարրերուն: Հոս եւս եկեղեցւոյ ազդեցութիւնը ամէնէն առաջ ներքին է: Խարխուլ չէնքի մը դուրսէն դուրս՝ նեցուկները, որմա-կալները ուրիշ բան չեն՝ եթէ ոչ առժամեայ անհաստատ միջոցներ, որ կը ծառայեն միայն ճակատագրական կործանումը քիչ մըն ալ ուշացնելու: Եթէ ժամանակին աւերները, որ չեն խնայեր շատ մը նոր ժամանակներու յու-շարձաններուն, խնայեր են ԺԳ. դարու հրաշալի գոթական տաճարներու, ե-թէ ասոնք չարունակեր են խաղաղ կերպով կանգուն մնալ զիրենք չընկալա-տող փլատակներու մէջ՝ պատճառն այն է որ իրենց մոյթերը ուրիշ բան չեն ըներ եթէ ոչ բերել օգնութիւն մը թանկազին, այո՛, բայց երկրորդական, դուրսէն, գոթական կազմուածքին ներքին զօրութեան, հանճարեղ ճարտա-րապետութեան մը, այնքան հաստատուն եւ ճշգրիտ, որքան յանդուգն ու թեթեւ:

Այսպէս ալ Եկեղեցին կը ներգործէ մարդուն ամէնէն ներքին մասին վրայ, մարդուն անձնական արժանապատուութեան վրայ՝ իբր աղատ արարաբաժի, անոր անսահմանօրէն աւելի բարձր արժանապատուութեան վրայ՝ իբր Աստուծոյ որդի։ Եկեղեցին կը կրթէ ու կը զաստիարակէ այս մարդը, վասն զի նա միայն կատարեալ իր բնական եւ գերբնական կեանքի ներդաշնակութեան մէջ, իր բնադրներու եւ հակումներու, իր հարուստ ձիրքերու եւ բազմատեսակ յարմարութիւններու կարգաւորեալ զարգացումին մէջ, միեւնոյն ժամանակ ծագումն է եւ նպատակը ընկերական կեանքի, եւ ասով՝ նաեւ սկիզբ՝ իր հաւասարակշռութեան։

Ահա եւ այսպէս

Ահա թէ ինչո՛ւ հեթանոսաց Առաքեալը խօսելով քրիստոնեաներու մասին կը յայտարարէ՝ որ անոնք այլեւս մարդկային ընկերութեան մէջ անհաստատ քայլերով «խռովեալ եւ տատանեալ» մանուկներ չեն⁶ :

Մեր երջանկայիշատակ Նախորդը Պիոս ԺԱ. ընկերային կարգի իր «Յամին քառասներորդի» կոնդակին մէջ այս մտածութեանն դործնական հետեւանք մը կը հանէր, երբ կը յայտարարէր ընդհանուր արժէք ունեցող սկզբունք մը, որ ըսել է, ինչ որ իւրաքանչիւր անհատ կրնայ ինքնիրմէ եւ իր սեփական ուժերով ընել՝ պէտք է անկէ առնուի եւ հասարակութեան յանձնուի, սկզբունք՝ որ կը զօրէ հաւասարապէս փոքր եւ ստորին կարգի հասարակութիւններու համար, նկատմամբ աւելի մեծերու եւ բարձրագոյններու։ Որովհետեւ — այսպէս կը շարունակէր իմաստուն Քահանայապետը — ընկերային ամէն դործունէութիւն ի բնէ օժանդակիչ է. պէտք է նեցուկ ծառայէ ընկերային մարմնի անդամներուն եւ ոչ երբեք զանոնք փճացնէ եւ ընկճէ¹։ Ծշմարտապէս լուսաւոր խօսքեր, եւ ոչ երբեք զանոնք փճացնէ եւ ընկճէ¹։ Ծշմարտապէս լուսաւոր խօսքեր, որոնք կը զօրեն ընկերական կեանքի բոլոր աստիճաններուն, ինչպէս նաեւ

[illegible]

Գ. Հաւասարութիւն. — Ամբողջական մարդը՝
կեդրոն ընկերային կարգին:

Անտարակոյս շատ տարրեր է պարազան կայսրութեան մը՝ հիմնուած խարխսիի մը վրայ՝ որուն հոգեկան նկարագիրը հաստատուած եւ ամրացած է պատմութեան ընթացքին եւ որ իր յենարանը կը գտնէ խղճին մէջ քաղա- քացիներու ահադին մեծամասնութեան։ Բայց ան չե՞նթարկէր արդեօք իր կող-

ղեցւոյ այս մայրենի մտահոգութեան եւ կը պարտադրէ զինքը եղբայրացնելու որ Հայրենիքի կայունութիւնը եւ փարոսմը պապենական աւանդութիւններու, անհրաժեշտ մարդուս լրիւ ամբողջութեան համար, հիմնական տարրեր են նաեւ մարդկային հասարակութեան համար: Սակայն յայտնապէս վեր վար ընել ու իր հակառակին վերածել մը պիտի ըլլար այս խնդրին բարերար արդիւնքը՝ եթէ մէկը ուղէր օգտագործել զայն արդարացնելու համար, բռնի հայրենիք վերադարձնելը եւ ապաստանի իրաւունք ժխտելը անոնց՝ որ ծանր պատճառներու համար կը փախաքին իրենց բնակութիւնը ուրիշ տեղ հաստատել:

Եկեղեցին որ կ'ապրի մարդուն սրտին մէջ եւ մարդը որ կ'ապրի Եկեղեցւոյ ծոցը, ահաւասիկ, Յարգելի Եղբայրներ, ամենախոր եւ դործօն միութիւնը զոր կարելի է ըմբռնել: Այս միութեամբ Եկեղեցին կը բարձրացնէ մարդը իր էութեան եւ կենսունակութեան կատարելութեան, տալու համար մարդկային ընկերութեան այսպէս կերտուած մարդիկ, մարդիկ՝ հաստատուած իրենց անբռնարարելի ամբողջութեան մէջ իբրեւ պատկերներ Աստուծոյ, մարդիկ՝ հպարտ իրենց անձնական արժանապատուութեամբ եւ իրենց կատարել ազատութեան մէջ, մարդիկ՝ արդարապէս նախանձաւոր հաւասարութեան իրենց նմաններուն հետ այն ամէն բանի մէջ՝ որ մարդկային արժանապատուութեան ամէնէն ներքին խորքը կը դպչի, մարդիկ՝ հաստատուն կերպով կառչած իրենց հայրենի հողին եւ իրենց աւանդութեան, մարդիկ՝ մէկ խօսքով, բնորոշուած այս քառակ տարրերով, ահա ինչ որ մարդկային ընկերութեան կու տայ իր ամուր հիմը եւ անոր կը հայթայթէ ապահովութիւն, հաւասարակշռութիւն, հաւասարութիւն, բնականոն աճում միջոցի եւ ժամանակի մէջ: Այս է ուրեմն նաեւ ճշմարիտ իմաստը եւ դործնական աղղեցութիւնը Եկեղեցւոյ զերազգայնութեան որ — հեռու կայսրութեան մը նմանելէ — վեր բարձրանալով բոլոր զանազանութիւններէն, բոլոր միջոցներէն եւ ժամանակներէն, անդադար կը կերտէ անխախտ հիմին վրայ մարդկային ամէն ընկերութեան: Վստահութիւն ունենանք Եկեղեցւոյ վրայ, եթէ ամէն ինչ կը տատանի իր շուրջը, ան հաստատուն կը մնայ: Անոր կը պատշաճի նաեւ մեր օրերուն ալ Տիրոջ խօսքը. «Թէպէտ եւ չարժեացի երկիր ամենայն բնակչօք իւրովը, ես հաստատեցի զսիւնս նորա»¹¹:

ԵՐԿՈՒ ԳԼԵԱԻՈՐ ՍԻՒՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Այդպիսի հիմի մը վրայ կը հանդէսն մասնաւորապէս երկու զլխաւոր սիւները, մարդկային ընկերութեան կառուցուածքը՝ ինչպէս Աստուած յղացեր է եւ կամեցեր՝ ընտանիքը եւ Պետութիւնը:

Այդպիսի հիմի մը վրայ կ'ընթան անոնք կրնան ապահովապէս եւ կատարելապէս հասնիլ իրենց յատուկ նպատակին. ընտանիքը իբր աղբիւր եւ դպրոց կեանքի, իսկ Պետութիւնը իբր խնամակալ իրաւունքի, որ ինչպէս

ինքնին ընկերութիւնը ընդհանրապէս՝ իր մերձաւոր ծագումը եւ վախճանն ունի ամբողջական մարդուն մէջ, մարդկային անձին մէջ, պատկեր Աստուծոյ: Առաքելալը երկու սքանչելի անուններով կը կոչէ հաւատացեալները. «Քաղաքակիցներ սուրբերու եւ անդամներ Աստուծոյ ընտանիքին» — «Քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ»¹²: Արդեօք մենք ալ չենք տեսներ զաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ: Միթէ թոյլ տրուած չէ՞ անոր մէջ նշմարել երկրորդը ընտանիքի կեանքին: Միթէ թոյլ տրուած չէ՞ անոր մէջ նշմարել ակնարկութիւն մը կերպին որով Եկեղեցին կը նպաստէ ամրացնելու ընկերութեան հիմը համաձայն իր ներքին կառուցուածքին, ընտանիքին եւ Պետութեան մէջ:

Այս յղացումը եւ այս դործելակերպը կորսնցուցած են արդեօք այսօր իրենց արժէքը: Ընկերութեան երկու մայր սիւները հեռացած ըլլալով իրենց ծանրութեան կեդրոնէն, բաժնուած են դժբախտաբար իրենց հիմէն: Եւ ի՞նչ ծանրութեան կեդրոնէն, բաժնուած են դժբախտաբար իրենց հիմէն: Եւ ի՞նչ առաջ եկեր, եթէ ոչ ընտանիքը տեսեր է նուազումը իր կենսական եւ կրթական ուժին, եւ պետութիւնը իր կողմէն կը դառնուի իրաւունքը պաշտօնական ուժին, եւ պետութիւնը իր կողմէն կը դառնալու համար Հին պանդղի առաքելութենէն հրաժարելու կէտին վրայ, դառնալու համար Հին Կտակարանի վիշապը՝ որ ամէն բանի կը տիրէ, որովհետեւ գրեթէ ամէն բան կ'ուզէ իրեն քաշել:

Անտարակոյս այսօր, անլուծանելի շփոթութեան մէջ ուր աշխարհս կը դալարի՝ Պետութիւնը կը դառնուի իր վրայ առնելու հարկաւորութեան մէջ պարտականութիւններու եւ պաշտօններու ահագին բեռ մը, բայց իրերու այս անբնականոն պայմանը չի՞ սպառնար արդեօք ծանրապէս վնասելու ներքին ուժին եւ հեղինակութեան ազդեցութեան:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԺՈՒԱՐԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Եւ հիմա, այս ամէնէն ի՞նչ կը հետեւի Եկեղեցւոյ համար: Եկեղեցին պէտք է այսօր դործադրէ աւելի քան երբեք իր առաքելութիւնը, պէտք է աւելի ուժգին կերպով մերժէ այն սխալ եւ անձուկ ըմբռնումը իր հոգեւորականութեան եւ իր ներքին կեանքին՝ որ կ'ուզէ զինքը սահմանափակել, կոյր եւ համր, սրբարանի առանձնութեան մէջ:

Եկեղեցին չի կրնար անդործ փակուելով իր տաճարներու խորը, լքել իր աստուածօրէն նախախնամական առաքելութիւնը՝ կերտելու ամբողջական մարդը եւ ասով դործակցելու անդադար ընկերութեան ամուր հիմին շինուած Եկեղեցին կարելի է ըսել թէ ընկերութիւնն է անոնց՝ որ շնորհքի գերուած Եկեղեցին կարելի է ըսել թէ ընկերութիւնն է անոնց՝ որ ընտանիքի գերական ազդեցութեան տակ, Աստուծոյ որդիներուն անձնական արժանապատուութեան կատարելութեան մէջ եւ բոլոր հակումներու եւ մարդկային ուժերու ներդաշնակ աճումին մէջ, կը կերտեն հօգը կառուցուածքը մարդկային կենակցութեան:

Այս երեւոյթին տակ, Յարգելի Եղբայրներ, հաւատացեալները՝ եւ ուելի

ՍԻՐԵՆՔ ԵԿԵՂԵՑԻՆ

Սիրենք Եկեղեցին, այս սուրբ, գործվազույթ եւ հօր Եկեղեցին, այս ճշմարտապէս գերազգային Եկեղեցին: Սիրել տանք բոլոր ժողովուրդներուն եւ մարդերուն: Մենք ինքնին ըլլանք հաստատուն հիմք ընկերութեան, որպէս զի ան ըլլայ իսկապէս «մէկ աղբ» մը, որու մասին կը խօսի Հիպպոնիայի մեծ Եպիսկոպոսը. «Մի աղբ», «զի մի հաւատք, զի մի յոյս, զի մի սէր, զի մի ակնկալութիւն»¹⁵:

Որպէս զի անոնք, զոր Աստուծոյ շնորհքը կոչեր է Եկեղեցւոյն ծոցը «ամէն ցեղերէ, լեզուներէ, ժողովուրդներէ եւ ազգերէ»¹⁶ ներկայ ծանր ժամուն դիտակից ըլլան իրենց սրբազան պարտականութեան՝ ճառագայթելու իրենց կենդանի եւ գործօն հաւատքէն Քրիստոսի հոգին եւ սէրը մարդկային ընկերութեան մէջ. որպէս զի իրենց կարգին բոլոր ժողովուրդները եւ մարդիկ, Եկեղեցւոյ մօտիկ կամ տակաւին անկէ հեռու՝ ճանչնան որ Եկեղեցին է Աստուծոյ փրկութիւնը մինչեւ աշխարհիս ծայրը¹⁷, բոլոր սրտով կը շնորհենք առանձնայատուկ սիրով մեր հայրական Առաքելական Օրհնութիւնը, Յարգելի Եղբայրներ, ձեզի, Եպիսկոպոսներուն եւ քահանաներուն՝ որ ձեզի կը գործակցին առաքելութեան մէջ, ձեր թեմերու հաւատացեալներուն, ձեր ընտանիքներուն, եւ բոլոր անձերուն եւ հաստատութիւններուն՝ որ ձեզի սիրելի են, ձեր աղբերուն, ձեր ժողովուրդներուն, համօրէն Եկեղեցւոյն եւ բովանդակ մարդկային գերդաստանին:

Գ. - ՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

21 Փետր. 1946. - Նորին Սրբութիւնը այս առաւօտ Վատիկանեան մայր Տաճարին մէջ հանրական Գերադոյն Համաժողովը կատարեց, եկեղեցւոյ նորընտիր վսեմ. Իշխաններուն տալով ծիրանաւորական զխարկը: Սրբազան Հայրը կը մտնէր Ս. Պետրոս ուսամբարձ, հայրապետական զգեստներով զարդարուած, տանեակ հազարներով հաւատացեալներու խուռն բազմութեան մը ցնծութեան եւ հրճուանքին մէջ: Սրբազան Հայրը մինչ կ'ուղղուէր իր բովանդակ հետեւորդ չքախումբով դէպի կեդրոնի Վկայարան-Նորանին վրայ շինուած պապական բարձր Գահը, իր անցքին կ'օրհնէր հաւատացեալներու անհամար բազմութիւնը, որոնք ծնրադիր կ'ընդունէին առաքելական օրհնութիւնը, մինչ եկեղեցւոյն ճակատին ներքին պատշգամէն արծաթեայ փողեր կը հնչեցնէին Լոնկիի քայլերգը: Երբ Սրբազան Պապը բազմեցաւ պատրաստուած գահուն վրայ, վսեմ. Ծիրանաւորներ նորոգեցին իրենց հնազանդութեան խոստումը, որմէ վերջ տեղի ունեցաւ չորս Երանելիներու սրբացուցման աղերսը. այս արարողութեան աւարտելուն՝ ահա

15. Մէկն. Սղմ. 26. Թ. 14. Migne, PL. հտ. 37, սիւն 1092.

16. Յայտ. Ե. 9.

17. Ես. Խթ. 6

մայր տաճարին կեդրոնական սրահէն տեսնուեցաւ նորընտիր Ծիրանաւորներու չքախումբը, որ կը յառաջէր դէպի Պապական Գահը, ուր հասնելուն՝ յետ համբուրելու Սրբազանին ոտքը ու ձեռքը՝ անոր հետ ուսահամբոյրով զրկախառն նուեցան կարգով, ապա իջնելով վար մէկիկ մէկիկ, միւս Ծիրանաւորներուն հետ ալ համբուրուեցան եւ հուսկ բազմեցան իրենց համար պատրաստուած բազմոցներուն վրայ: Միջանկեալ՝ սրբացուցման ուրիշ դատի մը արարողութիւնը կատարուեցաւ, որմէ վերջ նորընտիր Կարդինալները կրկին Սրբազանին առջեւ դարձան կարգով, որոնց գլխուն Ան դրաւ ծիրանաւորական Գլխարկը հետեւեալ բանաձեւով. «Ի փառս Աստուծոյ Ամենակալին եւ ի պայծառութիւն Առաքելական Սուրբ Աթոռոյս, առ քեզ զսաղաւարտն կարմիր՝ առանձնայատուկ նշանակ կարդինալական պատուոյն, որով ցուցանի եթէ պարտիս աներկիւղ ցուցանել զանձն քո մինչեւ ցհեղումն արեան» ի պանծացումն Սուրբ Հաւատոյ, ի խաղաղութիւն եւ յանդորրութիւն քրիստոնեայ որերոյն, ի բարգաւաճումն եւ ի հաստատութիւն Հոռոմէական Եկեղեցւոյ, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ Ամէն»:

Այս խորիմաստ արարողութեան վերջանալուն՝ Սրբազան Պապը օրհնեց առաքելական օրհնութեամբ քաղաքը եւ աշխարհը, ապա իջնելով Գահէն, նոյն-առաքելական օրհնութեամբ քաղաքը եւ աշխարհը, ապա իջնելով Գահէն, նոյն-պէս ուսամբարձ աթոռով վերադարձաւ իր Յարկաբաժինը՝ բոլոր իր չքախումբին ընկերակցութեամբ, հաւատացեալներուն անխառն եւ գերերկրային ցնծութեան աղաղակներուն մէջ:

Նորընտիր Ծիրանաւորները երթալով ապա Ս. Գահի Խորանը՝ գետնատա-րած ընդունեցան նորընտիրներու վրայ աւանդական դարձած վերջին օրհնու-թիւնը՝ զոր կը կարգայ ըստ սովորութեան Նրէց Կարդինալը՝ որ էր Կրանիթոյ Փինիաթելիի տի Պելմոնթէ. եւ յետոյ երկրորդ անգամ մ'ալ աղջազուրուելէ վերջ իրարու հետ՝ ուղղուեցան դէպի Առաքելապետին գերեզմանը աղօթելու համար:

Նոյն օրը երեկոյեան՝ Սրբազան Քահանայապետի Գերազ. Հանդերձապետը անձամբ տարաւ Վսեմ. Ծիրանաւոր Հոգեւոր Տիրոջ՝ Կարդինալական Գլխարկը:

Հ. Ս. Ա.

